



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ թիվ 49

19 ապրիլի 2012 թվական

ՀՈՂԱՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32 հոդվածի 17 կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 23-րդ հոդվածի անցումային դրույթներ 2-րդ կետի դրույթներով, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ Մարալիկի քաղաքապետի 15 հոկտեմբերի 1999 թվականի թիվ 39 որոշման համաձայն Լատվիական թաղամասի N 43 լիվանյան տիպի առանձնատան նկուղային հարկը հատկացվել է Մարալիկ քաղաքի բնակիչ Արտակ Կարապետի Ուռուտյանի ընտանիքին, ուստի պետական գրանցում կատարելու նպատակով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ

1. Մարալիկ քաղաքի բնակիչ՝ Արտակ Կարապետի Ուռուտյանին հատկացված Լատվիական թաղամասի N 43 լիվանյան տիպի կիսակառույց առանձնատանը կառուցման և սպասարկման նպատակով, վերականգման իրավունքով հատկացնել 0.05909 հա հողատարածք՝ վճարելով տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքը:
2. Արտակ Կարապետի Ուռուտյանի հետ օրենքով սահմանված կարգով կնքել հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր, ընտանիքի անդամներն են.
կինը՝ Լուսինե Դավիթի Ղազարյան
տղան՝ Արթուր Արտակի Ուռուտյան:
3. Ուժը կորցրած ճանաչել Մարալիկի քաղաքապետի 27 մարտի 2012 թվականի թիվ 31 որոշումը:

ՄԱՐԱԼԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ